

ըլլալով: Երկու տարի (1666-8) կը տեւէ տպագրութիւնը: Փորձերուն հոգ տարած է Կ. Վ. Անդրիանցի. բուրբերը սփռած, ժողված ու կազմած է՝ դարձեալ իր աշակերտը՝ Երեանցի Յօնան սարկաւագ: — 1666ին կը հրատարակէ նաեւ իր քարգմանած ու շարադրած **Քերականութիւնը**, նաեւ **Քրիստոնէական մը**, 1667 ին՝ **Ժամագիրք մեծ Բ. տիպ**, **Մառ-ոց, Քրիստոնէական հայ-լափն**. իսկ 1669 ին՝ Գարիժեցի Առաքել Վրդ.ի **Պատմութիւնը** որ ժէ. դարու ամենագեղեցիկ գործն էր, և հեղինակն ալ դեռ կենդանի: — Հակառակ իր գիրքերը կարգիկ կոչերին կողմէ արգելուած ըլլալուն՝ իրր հերետիկոսական գրուածքներ, Ոսկան ազատական և անկաշկանդ միաբի տէր անձ՝ «Ս. Էջմիածնի» նոյն տպարանին մէջ թոյլ տուաւ դրոշմել պապական գործեր՝ կրօն. բովանդակութեամբ: Համանման երկերու հրատարակութեամբ չուզեց սանձանափակուիլ. 1668 ին տպեց Խորենացիի **Աստուածագրութիւնը**, որուն միացուց նաեւ **Ազուհեագիրքը**: Երաւ է րէ գիտական նորութիւն մը ըլլալէ շատ նեղու էր այդ «Աշխարհագրութիւն»ը, բայց մեր ազգին համար աննախընթաց նորութիւն մըն էր: Նոյն տարին կը տպէ **Նոր կտակարան** և **Տօմարագիրք**, 1669 ին՝ Զայնքաղ Շարական: Այսպէս 4 տարուան մէջ հրատարակած եղաւ քաղմաքի գիրքեր. իր եռանդին հետ՝ մեծ էր նաեւ գործունէութիւնը, բայց դժբախտաբար անբմբերելի գրկանքներն ու դատմութիւններ բաժին ինկան իրեն: Պարսիքը դիգուած էին իրարու վրայ. Յակոբ կարողիկոս չէր կրնար որ և է օգնութիւն հասցունել, քանի որ ինքն ալ շատ անձուկ վիճակ մը ունէր: Աւելին կար. **Ոսկանի սպած Աստուածաւանդով ու Շարականով բեռնաւորեալ** նաւ մը կ'ընկղմի, վարդապետին մուխը մարելով: Ամեն կողմէ հարուածեալ և յուսամբէրեալ, դիմադրելու կարողութիւնը սպառած, մէկ միջոց միայն կը մնար իրեն, վերջնապէս հեռանալ պարտապանաճնելու ներկայութենէն: [Իր սրտայոյզ կենսագրութեան շարունակութիւնն ու իր տարածած մանր տե՛ս Ֆ Բ Ա Ն Ս Ա Յ Ի Բ Ա Ժ Ի Ն (Մարտիկա), 26-ի բուսհամար]:

268. Պատմանդեցի Յով-

հաննիսեան Մատթէոս ♦ —

Մարտիկոյ տպարանը գրաշարութիւն կ'ընէր և գայն կանգուն պանելու համար մաքառողներէն էր. «և տեսեալ եմ — կը գրէ — զգարակութիւնն և զանազողութիւն յամենայն կողմանց, վասն որոյ դիմեցի յերկիրն Հօլանտիոյ, ի վայելուչ քաղաքն յԱմստըրտամ» ուր կ'ուզէ դարձեալ պարապիլ իր նախասիրած գործով, և ուր կը գտնէ Նիկոլայուս անուն «լաւ վարպետ» մը և անոր պատրաստել կու տայ «զգիրս այբուրենից քաղմօք աշխատանօք, և զայլ տեսակս եւս զոոց նօտրի և բոլորի»: Բայց տեսնելով որ բաւականապէս դրամ չունի ինքնագլուխ գործելու համար, կ'ընկերանայ Երեանցի Յովնանէն քաջանայի և Զուդաշեցի վաճառական Պողոսի՝ **Շարականց** և **Ժամագիրք** դրոշմելու համար: Ա.ը լոյս կ'ընծայէ 1685 ին, Բ.ը՝ 1685 ին: Երկու տարի վերջ կը կրկնէ վերջնայն տպագրութիւնը: Այնուհետեւ 7 տարուան դադար մը: — Ինք, ինչպէս կ'իմացուի իր մականունէն, Գողթան զաւառի Վանանդ գիւղէն էր.



Վանանդեցի Մատթէոսի 21 Սեպտեմբեր 1685 ին
սպած Շարականցին 5րդ. էջը [փոքրցուած]

Վանանդեցի Մատթէոսի 21 Սեպտեմբեր 1685 ին
սպած Շարականցին 5րդ. էջը [փոքրցուած]